ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ք. Երևան **20.06.2018թ., ժամը 15:00**

Տեղի ունեցավ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) նիստը:

Մասնակցում էին.

Կառավարման խորհրդի անդամներ

Ա. Խաչատրյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար (խորհրդի նախագահ)
Հ. Այվազյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Հովհաննիսյան	ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ
Ա. Բաբայան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Բ. Պիպոյան	«Իրազեկ և պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպության ղեկավար (համաձայնությամբ)
Հ. Ավագյան	ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի տնօրեն (համաձայնությամբ)
Դ. Պիպոյան	ՀՀ ԳԱԱ-ի էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի ղեկավար, սննդագիտության դոկտոր (համաձայնությամբ)

Բացակայում էին.

Ա. Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Առաքելյան	ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող, կենսաբանական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ)

Մասնակիցներ՝

Ա. Ասոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի փորձագետ-խորհրդատու

Տ. Հակոբյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի փորձագետ-խորհրդատու
Գ. Ավետիսյան	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի թեկնածու
Ա. Գյուլումյան	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի թեկնածու
Գ. Գրիգորյան	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի թեկնածու

1. **Օրակարգ**. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում թեկնածուների առաջադրումը՝ ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնելու նպատակով:

Խորհրդի նիստը բացեց Խորհրդի նախագահ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար Ա. Խաչատրյանը, որից հետո Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին ներկայացված նիստի օրակարգը: Խորհրդի նախագահը նշեց, որ Խորհրդի քննարկմանը ներկայացված է ՍԱՏՄ-ի ղեկավարի երեք թեկանածություն՝ Գեորգի Ավետիսյանի, Արարատ Գյուլումյանի և Գրիգոր Գրիգորյանի: Խորհրդի նախագահի առաջարկությամբ որոշվեց երեք թեկնածուներին հերթականությամբ լսել՝ յուրաքանչյուրին հատկացնելով 3 րոպե ինքնակենսագրականները և իրենց պատկերացումները ներկայացնելու համար, այնուհետև 7 րոպե՝ թեկնածուներին հարցեր ուղղելու համար:

Գեորգի Ավետիսյանը ներկայացրեց իր կենսագրական տվյալները՝ նշելով, որ 1994 թվականին ընդունվել է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտը, որը հետագայում վերակազմակերպվել է գյուղատնտեսական ակադեմիայի: Աշխատանքային գործունեությունը սկսել է մինչև ինստիտուտ ընդունվելը՝ աշխատելով անասնաբուժության ոլորտում, սկզբում, որպես սանիտար, ապա բժշկի օգնական: Ինստիտուտը ավարտելուց հետո, որպես անասնաբույժ սպասարկել է Արարատի մարզի Ռանչպար գյուղը, այնուհետև շարունակել է զբաղվել մասնագիտական գործունեությամբ: 2011 թվականին աշխատանքի է անցել ՍԱՊԾ-ում, այնուհետև ՍԱՊԾ-ի ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ-ում զբաղեցրել տարբեր պաշտոններ՝ մինչև փոխտնօրենի, որտեղից

ապօրինի ազատվել է, այնուհետև դիմել է դատարան և 2018 թվականի փետրվարից վերականգնվել է նույն պաշտոնին: Այժմ աշխատում է նույն ՊՈԱԿ-ում՝ որպես տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

Անդրադառնալով ոլորտի վերաբերյալ իր պատկերացումներին՝ Ավետիսյանը որպես առաջնային խնդիր, առանձնացրեց վստահության վերականգնման անհրաժեշտությունը ոլորտի նկատմամբ՝ նշելով, որ գործիքակազմին կանդրադառնա իրեն ուղղված հարցերին պատասխանելու ընթացքում: Մինչ այդ, նշեց միայն, որ քանի որ ոլորտը բավականին բարդ է, և ունենք մի կողմից մարդկանց առողջության ու կյանքի հետ կապված խնդիրներ, իսկ մյուս կողմից ունենք փոքր և միջին ձեռնարկություններ, որոնց «պետք է չնեղացնենք», այսինքն՝ պատրաստվում է (նաև կառավարության օգնությամբ) կանգնել ձեռնարկությունների կողքին՝ լինելով առաջին հերթին խորհրդատու և ընկեր և հետո նոր՝ ստուգող կամ տուգանող:

Հարցեր ուղղեցին

Բ. Պիպոյանը, Հ. Ավագյանը, Դ. Պիպոյանը, Ա. Բաբայանը, Ա. Խաչատրյանը և Հ. Այվազյանը:

Հարց հնչեցվեց, թե ինչպես է թեկնածուն պատկերացնում հասարակության շրջանում վստահության վերականգնումը, որին ի պատասխան թեկնածուն նշեց, որ ինքը ջատագովն է հասարակական հատվածի հետ աշխատելու, և դրա համար տեսչական մարմինը պետք է աշխատի, ընդհանրապես, լրագրողների, ժողովրդի, հասարակական կազմակերպությունների հետ համատեղ, այսինքն՝ մեր հասարակությունը պետք է հասկանա, որ վերահսկողական մարմին է հանդիսանում, վերահսկողական գործառույթ է դրված նաև իրենց վրա: Թեկնածուն նշեց, որ, եթե նախկին ղեկավարությունը տխրում էր, երբ իրենց քննադատում էին, ապա ինքը, որպես ղեկավար, հակառակը՝ ուրախ կլինի, եթե դրսից քննադատողներ լինեն, լինեն մարդիկ, ովքեր ցույց կտան այն կետերը, որոնց հետևից իրենք պիտի գնան: Օրինակ՝ ստուգումների մասին օրենքը թույլ չի տալիս ամեն տեղ ստուգում անել, իսկ դրսից գործիք տվողներին նրանք միայն կողջունեն:

Հարցին, թե ինչ լուծում պետք է տալ ոլորտում առկա կադրային խնդրին, մասնավորապես, որ համակարգում առկա են բազմաթիվ մարդիկ, ովքեր որևէ մասնագիտական կրթություն և ոլորտի հետ առնչություն չունեն, թեկնածուն պատասխանեց, որ այստեղ առկա է խնդիր: Օրինակ՝ ֆիտոսանիտարիան և

անասնաբուժությունը «մեռնող», եթե ոչ «մեռած» ոլորտներ են երկրում, և այդ ոլորտի մասնագետներին պետք է խրախուսել, պետք է հնարավորինս բերել պետական համակարգ՝ օգտագործելով նրանց մասնագիտական հմտությունները: Դեմ լինելով «կադրային ջարդ» գաղափարին՝ թեկնածուն առաջարկում է խնդիրը լուծել պաշտոնի անձնագրերում այնպիսի փոփոխություններ կատարելով, որոնք ոչ թե հարմարեցվում են այն մարդկանց, որոնց բերում է ղեկավարը, այլ պարունակում են պահանջներ, որոնք անհրաժեշտ են տվյալ պաշտոնը զբաղեցնելու և գործառույթն իրականացնելու համար:

Հարցին, թե ինչպես է իրականացվելու ՓՄՁ-ների իրազեկվածության ապահովումը և կան արդյոք չափելի հնարավոր միջոցներ, թեկնածուն նշեց, որ մեծ բիզնեսը հնարավորություն ունի սեփական միջոցներով ապահովելու ոլորտին իր իրազեկվածությունը՝ սկսած HACCP և ISO համակարգերից, դրանց վերաբերյալ խորհրդատվութունից, այդ պատճառով էլ առանձնացնում է փոքր և միջին բիզնեսը: Նախատեսում է դիմել նաև հասարակական կազմակերպությունների օգնությանը՝ ժամանակ առ ժամանակ հանդիպել փոքր և միջին ձեռնարկությունների ղեկավարների հետ և քննարկել բոլոր բացերը և հասկանալ, թե ինչով կարող է տեսչական մարմինը օգնել նրանց, ընդգծեց իրենց դերակատարությունը «Անվտանգ սնունդ» գաղափարի ապահովման մեջ:

Հարցին, թե Վարչապետի կողմից տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում այլ թեկնածուի նշանակվելու դեպքում կշարունակի արդյոք թեկնածուն իրականացնել ոլորտում իր աշխատանքը, վերջինս պատասխանեց, որ միանշանակ կշարունակի:

Հարցին, թե կոնկրետ ինչ ժամկետներում է ապահովվելու տեսչական մարմնի նպատակներով և խնդիրներով սահմանված հետագծելիությունը տեսչական մարմնում, թեկնածուն պատասխանեց, որ ժամկետներ նշելը կլինի շատ պաշտոնական խոսք, քանի որ այդ համակարգի առաջին խնդիրը, որ պետք է լուծվի կենդանիների համարակալումն է, ինչը պահանջում է մեծ գումարներ, որոնց առկայության դեպքում կարճ ժամկետերում ամեն ինչը հնարավոր է ապահովել:

Հարցին, թե տեղյակ է արդյոք թեկնածուն Եվրամիության կողմից կատարված պաշտոնական ստուգումների հետ կապված փոփոխություններին, կարող՞ղ է արդյոք նշել դրանց երկու հիմնական ուղղությունները և կհասցնե՞նք արդյոք վեց ամսում ներդնել այդ համակարգը, թեկնածուն նշեց, որ կարևոր փոփոխություններից մեկը ռիսկի ձևակերպումն է, որ մինչ այսօր ռիսկը ազդեցությունն է մարդու կյանքի և

առողջության վրա, իսկ այս փոփոխության համապատասխան ռիսկ է համարվելու նաև կենդանիների և բույսերի առողջության վրա ազդող վտանգները: Թեկնածուն նշեց, որ այստեղ շատ անելիքներ կան թե իրավական դաշտում, թե մնացած հարցերում՝ ամբողջ համակարգը պիտի հիմնված լինի ռիսկի վրա ու այդ ռիսկը հասկանալով-գնահատելով պետք է գնալ առաջ: Երկրորդ ուղղությունը, որ թեկնածուն նշեց, ռեյտինգավորման խնդիրն է, որի գաղափարից ինքը զգուշանում է, քանի որ, եթե այսօր մենք այդ գաղափարը ներմուծենք մեր սահմանների մեջ, կարող է առաջնահերթությունների խնդիր ունենանք, բայց դա պետք է շատ լուրջ ուսումնասիրել, որպեսզի հասկանանք, թե ինչքանով է մեզ ռեյտինգավորումը օգնելու կամ խանգարելու:

Թեկնածուին առաջարկվեց թվարկել երեք խնդիր, որոնք առաջնային են և լուծում են պահանջում: Թեկնածուն նշեց վստահությունը, կոռուպցիայի վերացումը համակարգից՝ սկսած բարեկամական-ընկերական հարաբերություններից վերջացրած ֆինանսականով, և երրորդը՝ անգրագիտությունը և մասնագետների պակասը, ինչը պահանջում է շատ աշխատանք՝ սկսած ուսանողական աթոռից:

Հարցին, թե ինչպես է պատկերացնում թեկնածուն սննդամթերքի ներմուծման ժամանակ նմուշառում և սերտիֆիկատ ստանալու գործընթացները ձեռնարկատիրոջ համար հնարավորինս թեթևացնելով բյուրոկրատական քաշքաշոցները, թեկնածուն պատասխանեց, որ համակարգում առկա է խնդիր, որի լուծումը ինքը դեռևս չի կարող առաջարկել, սակայն գտնում է, որ դա հնարավոր կլինի տնտեսավարողների հետ հանդիպումների արդյունքում բոլոր առկա մեծ և փոքր խնդիրները գույքագրելուց հետո:

Հարցին, թե ինչ ժամկետներ են անհրաժեշտ և ինչ պետք է արվի, որպեսզի երկրում իրականացվի արդեն իսկ ձախողված՝ մորթը միայն սպանդանոցներում իրականացնելու ծրագիրը, թեկնածուն պատասխանեց, որ անհրաժեշտ է գույքագրել սպանդանոցների քանակը և հզորությունը, որից հետո նոր որոշել, թե ինչ ժամկետում դա կարող է իրականացվել, ինչպես նաև անրաժեշտ է մարդկանց խրախուսել, որպեսզի սպանդանոցներ կառուցեն, տալ արտոնություններ:

Արարատ Գյուլումյանը ներկայացրեց իր կենսագրական տվյալները՝ նշելով, որ ավարտել է ԵՊԲՀ-ի սանիտարա-հիգիենիկ ֆակուլտետը, այնուհետև ինտերնատուրան, ստացել է բժշկականխարգելիչ գործի մասնագետի որակավորում, և իր մասնագիտությամբ սկսել է զբաղվել զինվորական ծառայության ժամանակահատվածից սկսած: 2000-2002թթ ծառայել է ՀՀ զինված ուժերում որպես բուժ ծառայության պետ, հրետանային զորքերի

պատասխանատու բժիշկ: Զորացրվելուց անմիջապես հետո, որպես գլխավոր մասնագետ աշխատել է Հիգիենիկ հակահամաճարակային տեսչության Շենգավիթի տարածքային, իսկ 2005 թվականից մինչ օրս աշխատում է Պետական պահպանության ծառայությունում, որպես սանիտարական բժիշկ: Ոլորտի վերաբերյալ իր պատկերացումները Գյուլումյանը անդրադարձավ Խորհրդի անդամների տրված հարցերին պատասխանելու ընթացքում:

Հարցեր ուղղեցին

Բ. Պիպոյանը, Դ. Պիպոյանը, Հ. Այվազյանը և Ա. Խաչատրյանը:

Հարցին այն մասին, թե ինչպես է պատրաստվում լուծել տեսչական մարմնում առկա կադրային խնդիրը, թեկնածուն նշեց, որ աշխատակիցները պետք է համապատասխանեն պաշտոնների անձնագրերով ներկայացված պահանջներին և օրենքի տառին համապատասխան անելու է հնարավորը՝ կառույցը բանիմաց մասնագետներով համալրելու համար:

Հասարակական հատվածի հետ գործիքային համագործակցությունն ապահովելու վերաբերյալ թեկնածուն հայտնեց կարծիք, որ լինի այն սպառողների հետ, թե մեկ այլ կազմակերպության, տեսչական մարմնի բոլոր գործառույթներն ու աշխատանքները պետք է ուղղված լինեն մեկ քայլ առաջ տանելուն և ավելի լավացնելուն համագործակցություն թե հասարակական կազմակերպության, թե պետական այլ մարմինների թե ֆիզիկական անձանց և թե գործարարների հետ:

Պատասխանելով ռիսկերի վրա հիմնված համակարգի ներդրման վերաբերյալ իր տեսլականի մասին հարցին, թեկնածուն նշեց որ անհրաժեշտ է հաշվի առնել միջազգային փորձը, ճիշտ օգտագործել առկա մասնագիտական ներուժը, համագործակցել տարբեր կազմակերպությունների հետ և արդյունքում հնարավոր կլինի սահմանված ժամկետներում ապահովել խնդիրների լուծումը:

Թեկնածուին առաջարկվեց թվարկել երեք խնդիր, որոնք առաջնային են և լուծում են պահանջում: Թեկնածուն նշեց, որ ոլորտում առկա են օրենսդրական բացեր, որոնք անհրաժեշտ է վերացնել՝ մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով, երկրորդն այն է, որ օրենդրական դաշտը պետք է համաձայնեցվի գործող տնտեսավարողների պրոբլեմներին, երրորդը՝ երկիրը պետք է համահունչ քայլի միջազգային լավագույն փորձի, միջազգային պահանջների հետ:

Հարցին, թե ինչ ժամկետներ են անհրաժեշտ և ինչ պետք է արվի, որպեսզի երկրում իրականացվի արդեն իսկ ձախողված՝ մորթը միայն սպանդանոցներում իրականացնելու ծրագիրը, թեկնածուն պատասխանեց, որ ինքը կողմ է ծրագրի իրականացմանը, պատկերացնում է ծրագրի չիրականացման դեպքում բացասական հետևանքները, իսկ տեխնիկական առումով ժամկետ չի կարող նշել, քանի որ ամբողջությամբ ծանոթ չէ ծրագրին և կարող է դրանք հստակ նշել խնդիրն ամբողջությամբ ուսումնասիրելու դեպքում:

Գրիգոր Գրիգորյանը ներկայացրեց, որ հանդիսանում է կենդանիների առողջության և սննդի անվտանգության հարցերով փորձագետ, աշխատել է որպես Սննդամթերքի անվտանգության ծառայության առաջին պետ: Ներկայում աշխատում է որպես միջազգային փորձագետ կենդանիների առողջության և սննդի անվտանգության ոլորտում:

Թեկնածուն նշեց, որ տեսչական մարմնում իր աշխատանքը պատկերացնում է հետևյալ կերպ. ծառայությունում առակա խնդիրների մասին խոսել է բազմաթիվ լրատվամիջոցներով, նշում է, որ համակարգված աշխատանքը ներկայիս ծառայությունում բացակայում է, որովհետև կան ֆրագմենտային կոմպոնենտներ որոնք գործում են, բայց այդ կոմպոնենտների միջև չկա տրամաբանական կապ և տվյալների փոխօգտագործում: Թեկնածուն հատուկ անդրադրաձավ նաև միջազգային առաջատար փորձին և դրա կարևորությանը և հավելեց, որ թեև ներկայում աշխատում է արտասահմանում, սակայն եկել է և պատրաստ է իր գիտելիքներն ու ուժը ներդնել այստեղ աշխատանքը կազմակերպելու համար:

Հարցեր ուղղեցին

Բ. Պիպոյանը, Դ. Պիպոյանը, Հ. Ավագյան, Հ. Այվազյանը և Ա. Խաչատրյանը:

Պատասխանելով որակյալ մասնագետներով մարմինը համալրելու հարցին թեկնածուն նշեց, որ առաջին հերթին պետք է ուսումնասիրել նորմատիվային, փաստաթղթային բազան՝ ինչ ունենք, ինչպես են փոխվել փաստաթղթերը վերջին յոթ տարվա ընթացքում և ինչ է կատարվում համակարգում, որից հետո կազմակերպվի քննարկում համապատասխան մասնագետներով ու կայացվի որոշում: Մարմնի աշխատանքը պետք է հասցվի այն մակարդակի, որ այնտեղ աշխատելը փափագի յուրաքանչյուր մասնագետ:

Եվրամիության կողմից կատարված պաշտոնական ստուգումների հետ կապված փոփոխությունների, դրանց երկու հիմնական ուղղությունների՝ արտահանման ռիսկերի հետ կապված նոր համակարգի և ռեյտինգավորման, դրանց իրականացման մեխանիզմների և վեց ամսվա ընթացքում դրանք ներդնելու հնարավորության վերաբերյալ հարցին ի պատասխան, թեկնածուն նշեց, որ ինքը ի սկզբանե բազմիցս այդ մասին խոսել է մամուլում և դա համարում է իր մոտեցումներից մեկը: Թեկնածուն նշեց, որ սննդամթերքի անվտանգությունը ի սկզբանե սկսում է դաշտից, և մինչև մենք զոնավորում, ռեգիոնալիզացիա և կոմպարտմենտալիզացիա չկատարենք, արտահանում կազմակերպել հնարավոր չի լինի: Դրա համար կա հատուկ գործիքակազմ՝ կախված հումքի, բույսի, կենդանական ծագման մթերքի տեսակից: Այնուհետև հարցի վերբեյալ թեկնածուն տվեց մանրամասն մասնագիտական պատասխան նշելով, որ անհրաժեշտ է սկսել փոքր տարածքներից և երբ այդ փոքր տարածքի համար կստանանք համապատասխան միջազգային կառույցի հավանությունը մենք արդեն կարող ենք շարժվել առաջ՝ կիլոմետր առ կիլոմետր մենք հնարավորություն կունենանք մեր երկիրը դարձնել ապահով տարածք: Նաև հավելեց, որ բույսերի պաշտպանության ոլորտում նման փորձ ունի, որը իրականացրել է իր գործընկերոջ հետ Արարատյան դաշտում: Թեկնածուն նշեց նաև, որ վեց ամսում ծրագիրը հնարավոր չէ իրականացնել:

Հարցին, թե որն է նախկինում այս պաշտոնում պաշտոնավարման ընթացքում ունենալով հնարավորություն վերը թվարկված աշխատանքները կատարելու, ինչու դրանք չեն կատարվել և որն է եղել աշխատանքից ազատվելու պատճառը, թեկնածուն նշեց, որ ինքը դրել է ծառայության զարգացման հիմքերը, տեղեկացրեց, որ երեք ամսվա պաշտոնավարման ընթացքում պետությանը 167 միլիոն դրամի խնայողություն է տվել, իսկ իրեն աշխատանքից հեռացնելու պատճառը չի հրապարակվել:

Այնուհետև թեկնածուին տրվեց հարց, որպեսզի վերջինս պարզաբանի իր պաշտոնից ազատումը և 167 միլիոն խնայողությունը ինչպես է գոյացել, որին ի պատասխան թեկնածուն պատասխանեց, որ տվյալ պաշտոնին նա անցել է մրցույթով, այլ ոչ թե որպես այն ժամանակ գործող քաղաքական թիմի անդամ: Ինչ վերաբերում է խնայողությանը, ապա այդ ժամանակ պատվաստանյութերի գնման պրոցեսը շատ բարձր կոռուպցիոն ռիսկեր էր պարունակում և թեկնածուն այն ժամանակ, օգտագործելով իր կապերը և փորձագիտական կարծիքները, գտավ, որ այն թիվը, որը

պետությունը ծախսում է պատվաստանյութերի, դիագնոստիկումների ընտրման համար, ուռճեցված է, և առաջարկվեց արտահերթ վակցինա ներդնել, որն ավելի էժան էր, և խնայողությունները գոյացան դրա հաշվին:
Հարցին, թե ինչպես է համաձայնվում թողնել ներկայիս բարձր վարձատրվող միջազգային փորձագետի աշխատանքը, թեկնածուն պատասխանեց, որ եթե ինքը կառուցում է օտար երկրներում բարձր գնահատվող համակարգ, ուրեմն ինչու դա չանել մեր երկում:

Խորհրդի անդամները թեկնածուներին լսելուց և թեկնածուների վերաբերյալ որոշակի մտքեր փոխանակելուց հետո, Խորհրդի նախագահի առաջարկությամբ անցան քվեարկության:

Քվեարկություն՝
Գեորգի Ավետիսյանի թեկնածությունը Վարչապետին ներկայացնելուն միաձայն կողմ քվեարկեցին Խորհրդի նիստին մասնակցող յոթ անդամները:
Արարատ Գյուլումյանի թեկնածությունը Վարչապետին ներկայացնելուն կողմ քվեարկեցին Խորհրդի նիստին մասնակցող անդամներից վեցը և դեմ քվեարկեց մեկ անդամ՝ Ա. Հովհաննիսյան:
Գրիգոր Գրիգորյանի թեկնածությունը Վարչապետին ներկայացնելուն կողմ քվեարկեցին Խորհրդի նիստին մասնակցող անդամներից երեքը՝ Ա. Խաչատրյան, Ա. Բաբայան, Հ. Ավագյան և դեմ քվեարկեցին չորս անդամներ Հ. Այվազյան, Ա. Հովհաննիսյան, Բ. Պիպոյան, Դ. Պիպոյան:

Ամփոփելով քվեարկության արդյունքները Խորհրուրդը որոշեց Վարչապետին ներկայացնել Գեորգի Ավետիսյանի և Արարատ Գյուլումյանի թեկնածությունները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ